Տերունական աղոթք (Գրաբար)

ՀԱՅՐ ՄԵՐ

Հայր մեր որ յերկինս ես,
սուրբ եղիցի անուն Քո։
Եկեսցէ արքայութիւն Քո։
Եղիցին կամք Քո
որպէս յերկինս եւ յերկրի։
Զհաց մեր հանապազորդ
տուր մեզ այսօր։
Եւ թող մեզ զպարտիս մեր,
որպէս և մեք թողումք
մերոց պարտապանաց։
Եւ մի տանիր զմեզ ի փորձութիւն։
այլ փրկեա զմեզ ի չարէ։
Զի քո է արքայութիւն
եւ զօրութիւն եւ փառք
յաւիտեանս
Ամէն

Տերունական աղոթք (աշխարհաբար)

ՀԱՅՐ ՄԵՐ

Հա՛յր մեր, որ երկնքում ես,
Քո անունը սու՛րբ լինի,
Քո թագավորությունը գա՛,
Քո կամքը լինի՛
Ինչպես երկնքում, այնպես երկրի վրա,
Մեր ամենօրյա հացը տուր մեզ այսօր
Եվ մեզ ներիր մեր պարտքերը,
Ինչպես մենք կներենք մեր պարտապաններին
Ու մեզ փորձության մի տանի,
Այլ փրկիր մեզ չարից,
Քանի որ քոնն է թագավորությունը,
Զորությունը և փառքը հավիտյանս հավիտենից,
Ամեն:

Բան ԽԱ

Սրտի խորքերից խոսք Աստուծո հետ

Ա

Որդի՛ կենդանի Աստուծո, ամենաօրհնյա՛լ,

Անքնին ծնունդ դու ահավոր Հոր,

Քեզ համար չկա ոչինչ անհնար ու անկարելի:

Երբ ողորմությանդ փառքի անստվեր ճաճանչները ծագեն,

Կհալվեն մեղքերը, կհալածվեն դևերն ու կջնջվեն հանցանքները,

Կխզվեն կապանքները, կխորտակվեն շղթաները,

Կկենդանանան մեռյալները, կբուժվեն զարկվածները,

Եվ վերքերը կառողջանան.

Կվերանան ապականությունները, տեղի կտան տխրությունները,

Կնահանջեն հեծությունները, կփախչի խավարն, ու մեզը կմեկնի,

Կցրվի մառախուղն, ու մռայլը կփարատվի.

Կսպառվի աղջամուղջը, կվերանա մութն, ու

գիշերը կանցնի, Տագնապը կտարագրվի, կչքանան չարիքները,

Հուսահատությունները կհալածվեն,

Եվ կթագավորի քո ձեռքն ամենակարող, քավի՛չդ բոլորի:

Բ

Դու չեկար կորցնելու մարդկանց հոգիներն, այլ ազատելու.
Ների՛ր ինձ անթիվ չարիքներս՝ քո բազում ողորմությամբ,
Զի դու միայն ես երկնքում անճառ և երկրում՝ անզնին,
Գոյության տարրերի մեջ և աշխարհի բոլոր ծագերում,
Սկիզբն ամեն ինչի, և ամեն ինչի մեջ՝ ամբողջ լրումով,
Օրհնյա՛լ ի բարձունս.
Եվ քեզ՝ Հոր ու Սուրբ Հոգուդ հետ՝ փա՛ռք հավիտյանս. ամեն:

Տեր, ողորմեա

Տէր, ողորմեա՛. Տէր, ողորմեա՛.
Տէր, ողորմեա՛. Տէր, ողորմեա՛.

Ամենասուրբ Երրորդութիւն,
Տո՛ւր աշխարհիս խաղաղութիւն:

Եւ հիւանդաց բժշկութիւն,
Ննջեցելոց արքայութիւն:

Արի՛ Աստուած հարցն մերոց,
Որ ապավենդ ես նեղելոց:

Հա՛ս յօգնութիւն ծառայից քոց
Լեր օգնական ազգիս Հայոց:

Տէր, ողորմեա՛. Տէր, ողորմեա՛.
Շնորհիւ աւուրս մեզ ողորմեա: